

ՀԱՅ ԶԵՐԱԳՐԱՑԻՆ ԱԻԱՆԴՆԵՐԻ ԾԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՄՍՏԵՐԴԱՄԵԱՆ ՎԱՂ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Ժ.Զ. դարի 40ական թուականների գուտենբերգի տպագրութեան գիւտից յետոյ աշխարհասփիւռ մեր գաղթօջախներում գրչակենտրոնների կողքին հիմնուեցին տպարաններ, եւ ձեռագիր մատեանների կողքին հայ ընթերցողի մեղանին դրուեցին առաջին տպագիր գրքերը: Վենետիկում Յակոբ Մեղապարտը պատուիրեց բոլորգրի, զարդագրերի, 24 ճակատազարդերի տպագրական պատկերաձեւեր: 1512-1513 թուականների ընթացքում տպագրուեցին 5 անուն գիրք: Դրանցից միայն Խորհրդատետըն ունի հրատարակման տեղի, ժամանակի ու հրատարակչի մասին յիշատակարանային վկայութիւն (Ձ. մամուլի 7րդ էջում) «Դրեցաւ սուրբ տառս ի ԶԿԲ (1513) աստուածապահ Քաղաքս ի Վէթէծ որ է Վենետիկ Ֆրանկուան, ծեռամբ մեղապարտ Յակոբին. ով որ կարդայք մեղաց բողութիւն խնդրեցէ Աստուծոյ»¹:

Այդ դարի 20ական թուականներից սկսած արդէն հայերէն տպագիր գրքերում օգտագործւում են անուանաթերթի նախատիպերը: Այստեղ եւս ձեռագրի նման երկաթագրով գրուած երկար խորագրում հրատարակչի անունը յիշւում է գործի անուան, հայկական թուականի, հրատարակման տեղի եւ այլ կարեւոր մանրամասների թւում:

Այդ գրքերը աշխատում էին այնպէս տպել, որ դրանք հնարաւորինս աւելի շատ նման լինեն ձեռագիր մատեաններին:

Ժ.Զ.-Ժ.է. դարերի հայերէն տպագրութիւններում առանց գունազարդման նկարազարդ գրքառաջն է, թուչնագիր կամ հանդուցագիր գլխազարդերն ու տարբեր ձեւերի բուսական լուսանցազարդերը: Գիրը՝ ձեռագրերում հանդիպող բոլորգիրն է,

1 Հայ գիրքը 1512-1800 թուականներին, կազմեցին ՈՍԿԱՆԵԱՆ, Ն., ԿՈՇԵԱՆ, Ք., ՍԱՒԱԼԵԱՆ, Ա., Երևան, 1988, Յ. Այսուհետեւ՝ Հայ գիրք:

բնագիրը՝ վաղ ձեռագրական ընդօրինակութիւններից եկող առանց յստակ բառանջատման է, կէտաղրութիւնը՝ վաղագոյն՝ միջակէտն ու վերջակէտն են: Աւելի ուշ տպուած գրքերում հանդիպում են ընթերցանութեան եւ առողանութեան նշանները, որոնք նոյնական են ձեռագրական ընդօրինակութիւններում հանդիպող այդ բնոյթի նշանների հետ:

Ինչպէս հայերէն ձեռագիրը, որպէս որոշակի ժամանակահատուածի գրչութեան արուեստը մարմնաւորող նիւթական եւ հոգեւոր յուշարձան, իր էջերում առկայ բազմազան յիշատակարաններով, այնուամենայնիւ, տարբերուում է այլ ժողովուրդների ձեռագրական ժառանգութիւնից, այնպէս էլ հայերէն հնատիպ գիրքը գործի վերջում եղած յիշատակարաններով առանձնանում է այլ ժողովուրդների գրքարուեստի նմոյշներից:

Հայերէն ձեռագրերում յիշատակարաններն ի յայտ են եկել ձեռագրի ընդօրինակման արուեստի զարգացման որոշակի աստիճանում եւ գրչութեան արուեստի զարգացման հետ յիշատակարաններն եւս ձեւի ու բովանդակութեան տեսակէտից փոփոխման են ենթարկուել: Հայերէն հնատիպ գրքի տպագրութեան ընթացքը եւս զարգացման որոշակի մակարդակ է պահանջում, մինչեւ որ նրանց էջերում ի յայտ է գալիս ու արմատաւորուում յիշատակարան գրելու՝ դարերից եկող աւանդոյթը:

ԺԶ. դարի 60ական թուականներից սկսած՝ Աբգար դպիր Թոխաթեցու հրատարակութիւնների վերջում փոքր յիշատակարաններ կան. 1566ին Վենետիկում տպուած Սաղմոսարանն աւարտուում է «Փառք անքածանելի ... կազմեցաւ սուրբ Երգարանս Դաւթի լաւ եւ յընտիր օրինակէ Գառնեցւոյ Վարդապետի ... ի քուականիս Հայոց Ռժե (1566) մայիս ժն (15) աւրն ուրբաթ, ժթ. (12) ժամն...: Առ ոսս Մելքիսեդեկի եպիսկոպոսին, ի մայրաքաղաքն, ի Վանատիկ, ընդ հովանեաւ Մարկոս աւետարանչին, ի Հայոց Հոգետունն: ... ԲՃՃԲ (272) քուխտ է եւ ամմէնն կոխած է եւ իսկի գրչի գիր չկայ ի գիրքս, բաւ է»:

Իսկ արդէն դարի 80-ական թուականներից սկսած հնատիպերում նման յիշատակարաններին կից լինում են նաեւ չափածոյ յիշատակարաններ, որոնց նախատիպերը յաճախ են հանդիպում ուշ շրջանի ձեռագրական ընդօրինակութիւններում:

Վենետիկի Յովհաննէս Տերզնցու տպարանում 1587ին տպուած Սաղմոսարանի յիշատակարանում հրատարակիչներ Յովհաննէս Տերզնցին եւ որդին՝ Խաչատուրը, գրում են, որ գիրքը տպուել է թագաւոր Պատրիարք Գիթօնի, պատրիարք Ջուան Թրվիզանու ժամանակ, ապա յիշում են խոջա Շահվոլուն եւ Կարապետ Բաղիշեցուն ու Մտեփանոս «Հոգեւոր որդուն» որոնք օգնական եղան տպագրութեան գործին: Յովհաննէս Տերզնցին խնդրում է «մի Ողորմեայի» արժանի առնել կնոջը՝ Զինախփաշին, մօրը՝ Մարիամին, հօրը՝ Խանէսին: Գիրքն աւարտում է «Այս է տաղ եւ յիշատակարան ի վերայ անուան» ընդարձակ տաղով, որի սկզբնատողերը կազմում են «Տէր Յովհաննէս Տերզնցի» ծայրակապը³:

Ինչպէս տեսնում ենք հնատիպների յիշատակարանների կազմման սկզբունքը նոյնն է, ինչ ձեռագիր յիշատակարաններինը: Դրանցից իւրաքանչիւրը սկսում է փառքով, ապա գործի անուանումը, տպագրողի, տպագրութեան տեղի, ժամանակի վկայումը եւն: Այնուհետեւ յիշատակարաններում ժամանակի Հայոց հայրապետի, տուեալ երկրի թագաւորի, հոգեւոր առաջնորդի, պատուիրատու-միջոցների յատկացնողների, հրատարակչի ծնողների ու հարազատների, ինչպէս նաեւ հրատարակչութեան գործին օգնողների անունների թուարկումն է:

Ժի. դարից սկսած տպագիր գրքի յիշատակարաններն աւելի ընդարձակ են ու երկարացունչ, այդ դարին բնորոշ ձեռագրերի յիշատակարանային նմոլչների նման բաց չեն թողնում գործի հրատարակութեան հետ կապուած եւ ոչ մի մանրամասն: Հրատարակչի յիշատակարանում նոյն տպագրութեան հանգամանքների ու գիրքն աւարտին հասցնելու շարադրանքն է: Շատ դէպքերում, գրիչների նման տպագրիչները եւս գործն աւարտին հասցնելու համար ստիպուած էին մի տեղից միւս տեղը գնալ, նրանց պէս գտնել պատուիրատու-գումար տրամադրողներ:

Տպագրական աշխատանքը եւս որոշակի բարդութիւններ էր ենթադրում: Դա ամէնից առաջ ենթադրում է տառաձեւերի ստեղծում, ընտիր ձեռագրի, այսինքն՝ յայտնի վարդապետների կողմից ստուգուած եւ խմբագրուած օրինակի ճիշտ շարուածք ու վերջնական սրբագրողի անխոնջ աշխատանք: Տպագիր գրքի յիշատակարաններում տառաձեւեր ստեղծողների, շարուածքն անողների, սրբագրողների, հրատարակիչներին այդ բարդ աշխա-

տանքում օգնողների յանուանէ չնորհակալական լիշեցումներն են: Այլ կերպ նկարագրում է տպագրութեան ամբողջ ընթացքը՝ նախապատրաստումից մինչեւ տպագրութեան աւարտը: Այսպէս, Վենետիկի Յովհաննէս Անկիւրացու տպարանում տպուած ամս-տերդամեան սաղմոսարանի հետ միեւնոյն շարուածքի Սաղմոսա-րանում եղած յիշատակարանը վկայում է, որ հրատարակիչը փորձել էր այս գիրքը տպել դեռ Հռոմում, երբ «բազում չարչա-րանաւէ», զոր չէ հեար ի գիր արկանել», չորս տարում պողպատից ստեղծում է «գկաղապարքն զծաղիկին եւ զծաղկագրերն բազում աշխատութեամբ»: Զգտնելով պատշաճ հոգատարութիւն՝ ստի-պուած էր գնալ Վենետիկ, ուր եւ իրականացնել տպագրութիւնը «ի բուականիս Հայոց ՌՂԱ (1642) ... ի լաւ եւ ընտիր յարինակէ Գառնեցւոյ»:

Անկիւրացին ինքն է ընտրել տառաձեւերը, տողերը, թուղ-թը, ծաղկագրերն ու պատկերները եւ թէ կապերը, ինչպէս նաեւ՝ ստուգել բնագիրը ու «բազում աշխատութեամբ» աւարտին հաս-ցրել տպագրութիւնը: «Դարձեալ աղաչեմ յիշեցէ՞ ի Քրիստոս», շարունակում է յիշատակարանը հրատարակիչը, Տարանտացի մահտեսի Ամստուածատուրին, որ «բազում օգնութիւն արար ... ի սրբագրելն եւ ի յըսուգարանելն», ինչպէս նաեւ Յովսէփիոս մա-նուկին, որ «աւգնութիւն արար ... ի շարելն գրին»⁴:

Արտերկրում եւ հայկական գաղթօջախներում, ինչպէս հին, այնպէս էլ նոր հիմնուած Վենետիկի Յովհաննէս Անկիւրացու, Լվովի՝ Յովհաննէս Քարամեանի, նոր Զուղայի՝ Խաչատուր Կե-սարացու, Լիվունոյի՝ Յովհաննէս Զուղայեցու, Ամստերդամի՝ Մաթեւոս Մարեցու, Աւետիս Ղիմեցու տպարաններում ժէ. Դա-րում հրատարակուեցին մօտ 200 անուն գիրք:

Ամստերդամի հայկական տպարանի գործունէութիւնը պայ-մանականօրէն կարելի է բաժանել երկու շրջանի՝ ոսկանեան եւ վանանդեցիների:

Մաթեւոս Մարեցու հայկական խոշոր բոլորգրի, երկաթա-գրի, հանգուցագիր գլխազարդ տառաձեւերի կիրառումով Յով-հաննէս Անկիւրացու տպագիր օրինակից (1643) հրատարակուած ներսէս Շնորհալու «Թիսուս Որդի»ով (1660-1661) սկսում է հայերէն տպագրութիւնը Ամստերդամում հիմնուած «Սուրբ Էջմի-ածին եւ Սուրբ Մարգիս գօրավար» տպարանում:

«Յիսուս Որդի» տպագիր գրքի հրատարակումը սերտօրէն առնչում է գրաւոր մատեանի ստեղծման հետ: Այն եւս բաժանուած է պրակների՝ Ա.-Լի. (1-37), իւրաքանչիւրում՝ 8 թերթ, բացառութեամբ առաջին (Ա.) եւ վերջին՝ Լի. պրակների (որոնց թերթերի քանակը 6 է): Միաժամանակ ամէն պրակի վերջին էջում կրկնում է այդ պրակի պրականիշը՝ ա ա, թ թ եւ այլն: Կրկնուած են նաեւ էջակալումը 387-388, 389-390:

Սկզբում Յիսուս Որդո՛ Զիխեմի անուան յիշատակութիւնը կրող նկարն է, ապա կիսախորան ու ծաղկազարդ ունեցող գրքառաջը: Բնագրի առաջին բառը՝ Յիսուսը, հանգուցագիր է, մնացած բառերը թուչնագիր, բոլորն էլ՝ ուրուագծային: Գրքում մեծապէս կիրառական են բուսական լուսանցազարդերը: Զարդագրերից օգտագործուած է թուչնագիրը՝ 119, 433, 443, 453, 459, կենդանագիրը՝ 376, 442, 474 եւ վերջնանկարը՝ 499, 506, 510, 600 էջերում: Թէեւ բնագրային նկարազարդումը վերցուած է 1643ի Անկիւրացու օրինակից, անյուամենայնիւ, վենետիկեան հրատարակութեան մէջ աւելի շատ են պահպանուած հայ ձեռագրերի նկարազարդման աւանդները, քան Մաթեւոս Ծարեցու Ամստերդամեան հրատարակութեան մէջ, քանի որ այստեղ օգտագործուել են Ք. Վան Զիխեմ մակագրութեամբ 99 փորագիր պատկեր, որոնք եւրոպական արուեստի նմոյշներ են:⁵

Ինչպէս ցանկացած հրատարակութիւններում, այնպէս էլ այստեղ, հայերէն տպագիր գրքում հայերէն ձեռագրերի հետ մօտաւոր աղերսներ ունեն միայն գրի տառատեսակները եւ բնագրի նկարազարդումը: Լուսանցազարդերը, կիսախորանները, գեղեցիկ թուչնագիր գլխազարդերը սոսկ ուրուագծային արտացոլումն են հայկական ձեռագրերի նկարազարդման արուեստի:

Գիրքն աւարտում է երկարաշունչ «յիշատակարան ծանուցում պայծառ ընթերցողաց»ով: Ծարեցին մանրամասնութեամբ նկարագրում է հրատարակութեան հետ կապուած դժուարութիւնները: Յակոր կաթողիկոսի հրամանով իզմիրից վենետիկ գնալը, այստեղ գրաշար արհեստաւորների պակաս լինելը, Հռոմի տարածամ մահուան ալիքը, դրա հետ կապուած 14 ամիսների երկար սպասումները, ապա Հռոմում հոգեւորականների կողմից ոչ պատշաճ ընդունելութիւնը, որն ուղեկցուում է հրատարակչի 8 ամիս առանց օժանդակութեան, պարտքերի մէջ մնալով: Այս ամէնից յետոյ Ծարեցին հաստատում է «ի գեղեցկաշէն վայելուչ

5 Մաշտոցի անուան Մատենադարան հնատիպ ֆոնդ N 2331:

Քաղաքն»՝ Ամստերդամում։ Այստեղ եւս գժուարութիւնները անպակաս են լինում։ Նա հանդիպում է նոյն չկամութեանն ու յոյսը դնելով միայն Աստուծոյ զօրութեան վրայ՝ ի վերջոյ սկսում Ներսէս Շնորհալու նշանաւոր գործի՝ Յիսուս Որդու տպագրութիւնը «ի Հայոց Ռձծ (1660)» բազում նեղութեան, պանդխտութեան մէջ։ Մէկ օրինակից արուած այս տպագրութիւնը կապուած էր լուրջ բարդութիւնների հետ։ Գրքի շարողները ֆրանկներ էին, որոնք հայերէնին չէին տիրապետում։ Հիւանդութիւնից հոգեմալ Մաթեւոս Մարեցին ստիպուած ինքն էր սրբագրել գործը, ընթերցողից խնդրելով իրենց մաքրափայլ աղօթքներում յիշել իրեն՝ դպիր Մաթեւոսին, հօրը՝ Աւագին, մօրը՝ Պեկիխանին եւ չորս եղբայրներին Հայերիխանին, Վարդանին, Պալասանին, Մանգասարին։ Հէնց այստեղ էլ աւարտում է Մարեցու թողած յիշատակարանը⁶։

Տպագրութեան գործը Ոսկան Երեւանցու պահանջով շարունակում է Ամստերդամ եկած եղբայրը՝ Ղիճեցի Աւետիսը։ Այդ եւ ուրիշ այլ տեղեկութիւններ կան սոյն յիշատակարանի շարունակութիւնում։

Դրա հանգամանալից շարադարանքից իմանում ենք, որ Մարեցու մահուամբ կիսատ էր մնացել բնագրի շարուածքը (վերջինս սրբագրել էր սկզբից մինչեւ ԼԲ (32) պրակը)։ Եւ տարակուսեալ տպագրութեան գործին անտեղեակ Աւետիս Ղիճեցին, չգտնելով որեւէ մէկին, որ շարուածքը սրբագրի, ստիպուած երեք ամսում ինքն է սրբագրում գործի մնացեալ 12 պրակները եւ աւարտին հասցնում «Յիսուս Որդու» հրատարակութիւնը։

Ոսկան Երեւանցու պահանջով, տպարանում այլ գործեր հրատարակելու ժամանակ Աւետիս Ղիճեցուն սրբագրութեան մէջ օգնելու նպատակով, Ամստերդամ է գալիս Յովհաննէսի որդի Կարապետ Աղրիխանցին։

Ամստերդամի Ս. էջմիածնի եւ Ս. Մարգսի տպարանում այս նոյն թուականներին Մատթէոս Մարեցու տառատեսակներով եւ Մովսէս րաբունապետի օրինակից է տպուել «Սաղմոս Դաւիթ մարգարէի, որ եւ Սաղմոսարան յորջորջի» գործը։ Գիրքն ունի առաջաբան եւ բնագրային 762 էջ։ էջերի ազատ մասերում ձեռագիր մատեանների նման գիրքն ունի մանր յիշատակագրութիւններ եւ գլխաւոր յիշատակարան (էջ 744)։ Բաժանուած է

6 Հայ գիրքը, 36:

պրակների՝ Ա.-Խթ.: Պրակակալումը թղթի ստորին լուսանցքում հայկական թուարժէքին գուգահեռ՝ նաեւ արաբական են (ա 1, 2, թ 1, 2). Ամբողջ գիրքը ունի նաեւ արաբական թուանշանային համարակալում ըստ աճողականի, որ դրուած է էջի վերեւի լուսանցքում։ Նկարազարդման մէջ լայնօրէն օգտագործուել են թուչնագիրը, բուսական զարդանախշերը, վերջում ունի բուսական վերջնազարդ (էջ 764)։ Սաղմոսների գլուխները բաժանւում են թուչնագրերով եւ բուսական զարդանախշերով։ ԼԶ. (էջ 181), ՄԵ. (էջ 277), ՀԲ. (էջ 359), ՂԹ. (էջ 451), ՃԶ. (էջ 527) սաղմոսները թուչնագիր են ու ճակատազարդով, Խ. սաղմոսը կենդանագիր է բուսական նախշի հետ։ Բոլոր սաղմոսների գլուխների լուսանցարդերը բուսական են, բացառութեամբ ԿԴ. սաղմոսի (տաճար էջ 310)։ Ձեռագրերի նման՝ գրքարուեստի առանձնայտկութիւններից է նաեւ այն, որ այս Սաղմոսարանի թերթերի լուսանցարկողերը ներկուած են կարմիր գոյնով։⁷

Բնագրի շարուածքի գիրը բոլորգիրն է։ Այստեղ կիրառուել է տպագիր գրքարուեստին բնորոշ հետեւեալ սկզբունքը՝ բնագրի շարուածքի շարունակութիւնը։ Էջափոխման ժամանակ նախորդ էջի ստորին լուսանցքում գրւում էր յաջորդ էջի առաջին բառի մի մասը։ Տպագրից եկող այս առանձնայտկութիւնը մէկն է այն միջոցներից, որ կիրառուել է ուշ ձեռագրական միաւորներում։ Ժի. դարից սկսած հայկական ձեռագրերում, մասնաւորապէս, երբ գրիչները իրենց ընդօրինակութիւններն անում էին գործի տպագիր օրինակից, սկսում է տարածուել ընդօրինակման այս ձեւը, քանի որ գրչութեան պարտադիր պայմաններից մէկը գրչի հարազատ մնալն էր գաղափար՝ ընդօրինակուող օրինակին։ Տպագիր գրքից եկող այս ձեւը ԺԹ.-ի. դարերում դառնում է անգամ անտիպ գործերի ընդօրինակման սկզբունք։

Մատեանի ազատ էջերում գրիչների մանր յիշատակագրութիւններ են յիշեցնում գրքի 168 եւ 444 էջերի այս յիշատակարանները։ «Աղաչեմ զաեզ տեարք իմ սուրբք եւ եղբարք իմ։ յիշեսցիք ի առ Քրիստոս զմսկան բարունապեսի աշակերտ զտէր Յովհանիսի որդի՝ զԱնդրիանացի Կարապետոս զապասաւոր բանի, զարքագրող մատենիս։ եւ դուք յիշեալք լիշիք կրկնակի գալստեան դորա. ամէն» (էջ 168)։ Այս բնոյթի աւելի փոքր յիշատակագրութիւն է թողնուած էջ 444ում⁸։

7 Մաշտոցի անուան Մատենադարան, հմատիպ ֆոնդ 2362:

8 Հայ գիրքը, 39:

Տպագիր գրքի բովանդակութիւնը թելադրել է համապատասխան գրքարուեստ եւ տեխնիկական ոճերի կիրառում։ Դրանցում ձեռագրական մօտեցումը առաւել ակնյայտ է հիմնականում ծիսական բնոյթի հրատարակութիւններում, որոնց ձեռագրային համարժէքները դարերի ընթացքում ձեւալորուած գեղարուեստական յարդարանքի իրենց օրէնքներն ունեն։

Ձեռագրերում, մասնաւորապէս ժողովածուներում, ամէն մի միաւոր միւսից անջատւում է ոչ՝ միայն մելանի կարմիր գոյնով, այլեւ երբեմն նաև տառատեսակով՝ երկաթագրով, նօտրգրով։ Ձեռագիր մատեաններում թանաքի գունային տարբերութիւններն ամէնից աւելի ցայտուն են «Հարցումն եւ պատասխանի» անուանուող գործերում։ Բնագրում հարցերը կարմրագիր են, իսկ պատասխանները՝ սեւ։

Ոսկանեան տպագրութիւններում բնագրում հարցերը շարուած են ձեռագրի կարմրին համարժէք մուգ սեւով եւ միաժամանակ նաև թեք՝ որով դրանք նօտրգրութեան երանգ են ստանում։ Բնագրի շարուածքում օգտագործուել են Մաթեւոս Մարեցու, Աւետիս Ղլիճեցու պատուիրած գրերն ու զարդագրերը, ինչպէս նաև հայ տպագրութեան մէջ առաջին անգամ կիրառուող՝ Ոսկան Երեւանցու՝ աչքի համար տարբերակիչ նօտրգիրը։

Ամստերդամեան հրատարակութեան ամէնից նշանակալից գործը Շարակնոցի 1664-1665 թուականների հրատարակութիւնն է։ Տպագիր գիրքն այստեղ եւս կրկնում է ձեռագրի ստեղծման հետ կապուած ամէն մի օրինաչփութիւն։ ունի պրակակալում՝ Ա.-ԼԴ. (1-34)։ Ամէն մի պրակը 8 թերթանի է, բացի Ա. եւ ԼԴ.-ից։ Դրանք 6 թերթանի են։ Ամբողջ գիրքն, ըստ աճողականութեան էջակալուած է արաբական թուանշաններով։ Շարադրանքի գիրը՝ բոլորգիրն է, խորագրերում առաջին անգամ օգտագործուած է ոսկանեան նօտրգիրը։

Ամէն կանոն միւս կանոններից բաժանւում է գլխագրերով եւ լուսանցազարդերով, ինչպէս նաև Կանոն Աստուածայայատնութեան (27), Կանոն Բուն Բարեկենդանի (131) եւ այլ կանոնական ճակատագրդերով (241, 289, 489, 647) եւ մէկ կիսախորանով կանոն Յարութեան Յիսուսի (297) եւ այլ փորագրական նկարներով (թուով 49)։ Այսպէս է նկարագրդուած ոչ միայն ձեռագիր Շարակնոցը, այլեւ միւս ծիսական ժողովածուները՝ Յայսմաւուրք, Գանձարան։ Նկարագրդման ժամանակ օգտագործուել են մեծ թուով զարդագրեր՝ թունագիր (12, 35, 38, 471, 64, 179,

191), կենդանագիր (46, 53, 128), լուսանցազարդեր՝ բուսական ծաղիկ, տաճար (75, 324) եւ վերջնազարդ:

Վերջում ունի յիշատակարան (777-779), ուր ոչ միայն Շարակնոցի, այլև սպասուող Աստուածաշնչի հրատարակութիւնների հետ կապուած շատ կարեւոր մանրամասներ կան: Այսպէս, ամէնից առաջ իմանում ենք, որ Յակոբ կաթողիկոսի հրամանով Ուսկան Երեւանցին գալիս է Հոլանդիա տպագրութեան գործը ղեկավարելու համար: 1664ին նաւահանգիստ Գանդուկիում (Լիվոռնոյի մօտ) իր եղբայր Աւետիսից ստացուած յատուկ գրութեամբ Ս. Էջմիածին եւ Ս. Սարգիս տպարանի տէր է դառնում Ուսկան Երեւանցին եւ վկայում է, որ մինչեւ Ամստերդամ հասնելը, իր աշակերտ Կարապետ Աղրիանացուն յանձնարարում է «զպակասորդ խազից տալ շինել եւ մինչեւ ցաւարտումն խազիցն» տպել Սաղմոսարան եւ շարունակել Շարակնոցը⁹:

Աշակերտը կատարում է ուսուցչի պատուէրները: Այս նոյն տպարանում հրատարակում է Սաղմոսարան «...յամի կենարարին թույ ՌՈԿ եւ չորից (1664), յամսեանն հոռմէացոց օգոստոսի Բ (2) եւ ի թուականիս Հայոց Ռ եւ Ճ եւ Ժ եւ երից (1113)» օգնական ունենալով իր աշակերտ «Փլամէնկ» Յովհաննէսին, այնուամենայնիւ միայնակ սրբագրում է շարուածքը¹⁰: Սաղմոսարանի տպագրութեան հետ Շարակնոցի շարուածքը հասցնում է մինչեւ «Կարգ Համբարձմանն»:

Ուսուցչի Ամստերդամում հաստատուելուց յետոյ ձեռնամուխ է լինում Աստուածաշնչի խորագրերի համար անհրաժեշտ նօտրգրի պատրաստմանը, որի համար պահանջուել էր չորս ամիս: «Ետու քանդակել զնոսոր գիրսդ ... որ մեծաւ ջանիւ հազիւ մինչեւ ի Դ (4) ամիսն աւարտեցաւ...»¹¹:

Հրատարակիչները հետեւելով Արիստակէս գրչի (Հռետորի) հրահանգներին (ի նկատի ունի «Վերլուծութիւնն քացերեւապէս բազմազան բառից եւ բայից յայնախասդ շարագրութեամբ արարեալ զատ ի խնդրոյ բազմաց յարուեստ գրչութեան» գործը) աշխատանքը սրբագրում են ուշագրութիւն դարձնելով: «Ք է ի հոլովս անուանց եւ ի նախադրութիւն նոցա, թ է ի ժամանակն բայից եւ ի կերպաւորութիւն նոցա», ապա գնահատելով Արիստակէս հռետորի քերականական փոփոխութիւններն, աւելացնում է: «Վասն որոյ

9 Մաշտոցի ամուսն Մատենադարան, հնատիպ ֆոնդ 461:

10 Հայ գիրքը, 41:

11 Անդ, 43:

եթէ ոք հմուտ է ֆերբութեան և վարժ գրչութեան Արիստակեսայ գոցէ եւ ոչինչ պակասեալ ի գրելոց նորին»:¹² Տպագրման գործն աւարտին է հասցնում «ներ բուռում Փրկչի հազար վեցեարիւր եւ վարտուն եւ հեգումն յամսեանն նոյեմբերի, որոյ էին աւուրք մեկ: Իսկ ընդ բուռում Հայոց հազար հարիւր եւ հեգումն ներ ամսում նաւասարդի որոյ էին աւուրք ի հոյակապ նաւահանգիստ Ամստերդամ»:¹³

Ոսկան Երեւանցու պահանջով հայ տպագրութեան պատմութեան մէջ առաջին անգամ պատրաստում են շարականների հայերէն նոտագրման՝ խազագրման բացառիկ ճշգրիտ ձեւեր: Շարակնոցի բնագիրը մասնագէտները համարում են այնքան ստոյգ, խազերի տեղադրումը այնքան ճիշտ, որ այդ տպագիրը կարելի է նոյնացնել ձեռագրի ընդօրինակման համար անհրաժեշտ «ընտիր եւ ստոյգ» գաղափար օրինակի հետ: Ոսկան Երեւանցին Շարակնոց ժողովածուից օգտուելը հեշտացրել է տպագիր օրինակ մտցնելով «օրինութիւնների բաղրուածք» եւ «կամնական երգերի բանակ», «իմանափերի տախտակ» ու «շարական երգերի հերինակների ցուցակը», «համարողութեան համեմատական տախտակը» եւ «ուրը ճայնականակների կարգը»: Մրանց մէջ ամէնից աւելի կարեւոր է «Անուանք խազից» տարբերիչ տախտակը, 24 խազագրերով: Ուստի պատահական չէ, որ 1669-1700 կ. Պօլսի Աստուածատուր կոստանդնուպօլսեցու տպարանում Ոսկան Երեւանցու օրինակից է վերաշարուած Շարակնոցը,¹⁴ իսկ Ս. Էջմիածնի Ս. Գրիգոր Լուսաւորիչ տպարանում հրատարակուած 1789ի Շարակնոցը նրա կազմած «Անուանք խազից» է պարունակում:¹⁵

Ճշգրիտ խազագրման մի նմոյշ է նաեւ Ոսկան Երեւանցու 1667ի Մաշտոցի տպագրութիւնը: Գրքի երկար խորագիրը տիտղոսաթղթում է, ուր երկաթագրի հետ («Գիրք Մրոյն Մաշտոցայ վարդապետի ...», 4 բառ) մեծապէս օգտագործուած է նաեւ վարդապետի Փառագաղթուած Շարակնոցը, իսկ Ս. Էջմիածնի Ս. Գրիգոր Լուսաւորիչ տպարանում հրատարակուած 1789ի Շարակնոցը նրա կազմած «Անուանք խազից» է պարունակում:

12 Հայ գիրքը, 43:

13 Անդ, 45:

14 Անդ, 130:

15 Շարակնոց երաժշտական երգեցմունք հոգեւորականք, Էջմիածին, 1789, 886: Հմմտ. ԹԱՀՄԻԶԵԱՆ, Ն., Ոսկան վարդապետը ու խազագրութեան արուեստը, Էջմիածին 1966, N ԺԲ., 164:

«Կանոն յորժամ եպիսկոպոս կամ քահանայ կամ հայրապետ կամ ուխտի առաջնորդ կատարի մահուամբ» (142-242) եւ «Կանոն նաւակատեայ ...» (305), «Օրինութիւն սեղանոյ ...» (306), «Կանոն խունկ օրինելոյ» (6) կանոնները: Գրքում բացի խորագրում եղած յիշատակարանային վկայութեան՝ «... Տպագրեցաւ ի տպարանի Սրբոյ էջմիածնի եւ Սրբոյն Սարգսի զօրավարին, ի հայրապետութեան տեառն Յակորայ կաթուղիկոսի Սրբոյ էջմիածնի, ծախիւք եւ սրբագրութեամբ Ուսկանայ վարդապետի արքիւպիսկոպոսի Երեւանեցոյ, ի Յամստեղոդամի (քառը երկարագիր), ի բւոյ Փրկչին, 1667, դեկտեմբերի 11, իսկ ըստ Հայոց 1116, դեկտեմբերի 1», այլ յիշատակարան գոյութիւն չունի:¹⁶

Խօսելով Ոսկան Երեւանցու նման բնոյթի հրատարակութիւնների արժանիքների մասին, երաժշտագէտ Ն. Թահմիզեանը գրում է, որ նաեւ «քննագիրը կէտերով եւ առոգանութեան նշաններով օժտելու եւ վերջիններս առհասարակ քանիմաց կերպով կիրառելու մեջ է»¹⁷:

Ոսկանեան հրատարակութեան ամենանշանակալից գործը 1666-1668ի համեմատական խմբագրութեամբ Ոսկան Երեւանցու հրատարակած Աստուածաշուչն է: Տիտղոսաթերթում գեղեցիկ զարդանախչ շրջանակի մէջ խորագիրն է՝ «Աստուածաշունչ Հնոց եւ Նորոց կտակարանաց ներպարունակոյ շարակարգութեամբ նախնեացն մերոց եւ նշմարտասիրաց բարգմանչաց»: Առաջին բառը՝ «Աստուածաշունչը» թունագրերով է, դրան յաջորդող ամբողջ նախադասութիւնը՝ երկաթագիր է: Երկաթագրով է գրուած նաեւ տպագրութեան վայրը՝ «Ամստերդամ»ը: Ապա յաջորդում է յիշատակարանային մասը՝ բոլորգրով: «Իսկ զկնի հրամանաւ վեհափառին Տեառն Յակորայ Հայոց Կաթուղիկոսի գլխակարգեալ եւ տնաւտեալ ըստ Դադմատացւցն, նաեւ գհամաձայնութիւն հանուրց գրոց Աստուածաշնից ընդ իրար առընթեր կարգեալ ամենեցուն նուաստի ումեմն քանի Տեառն սպասաւորի Ուսկանի Երեւանեցոյ: Յամստեղդամ ներ Տպարանում սրբոյն էջմիածնի եւ սրբոյն Սարգսի զօրավարի ի բուում Փրկչին 1666, իսկ Հայոց ՌՃՃԵ. նամսեանն մարտի մետասանի»:

Շարուածքը՝ իր աշակերտ Կարապետ Աղրիանացի սրբագրիչինն է: Օգտագործուել են Մաթեւոս Ծարեցու, Աւետիս Ղլի-

16 Հայ գիրքը, 52:

17 ԹԱՀՄԻԳԾԱՆ, ն., Ոսկան վարդապետը ու խազագրութեամ արուեստը, էջմիածիմ 1966, N ԺԲ., 161:

ճեցու պատուիրած գրերն ու զարդագրերը, Ոսկան Երեւանցու՝ աչքի համար տարբերակիչ նօտրգիր շարուածքը, որ ստեղծուել էր ամէնից առաջ Աստուածաշնչի գլխագրերը տպագրելու համար. «Ետու քանդակել զնօտրգիրսդ սակա խորագրութեան Աստուածաշնչին»¹⁸: Նկարազարդման մէջ կան տարբերութիւններ. Նոր կտակարանի սկզբում չորս աւետարանիչների նկարն է, իսկ աւետարանառաջները բացում են ոչ թէ կիսախորանով, այլ փորագրական նկարներով (օրինակ, Մատթէոսը կենաց ծառի տակ պառկած): Ընդհանրապէս, ամբողջ Աստուածաշնչում կայ Քրիստովիր վան Զիինեմի սկզբնատառերով 160 փորագիր պատկեր, որոնք եւրոպական պատկերագրական արուեստի գեղեցիկ նմոյշներ են: Տպագիր Աստուածաշունչը (հակառակ բնագրում օգտագործուած գրչագիր բոլորգրի ու թռչնագրերի նմոյշների), ինչպէս տեսնում ենք բաւականին հեռացել էր Աստուածաշնչի ձեռագիր օրինակից: Սա բացատրում է ոչ միայն եւրոպական այդ երկրի գրաֆննութեամբ, այլեւ փորագրական նմոյշների ստեղծման նիւթական եւ այլ դժուարութիւններով: Բացի այդ, աստուածաշնչեան ձեռագրերում կանոնական է ոչ միայն բնագիրը, այլեւ նրա նկարազարդումը: Ընդհանրապէս, ձեռագրում ոչ մի զարդ, լուսանցազարդ, գլխազարդ ծաղկողի ցանկութեամբ չի արւում, աւելին, ինչպէս գրիչը հարազատ է մնում «ընտիր եւ ստոյգ օրինակի» բնագրին, այնպէս էլ ծաղկողը՝ նկարազարդման ոճային առանձնայատկութիւններին:

Աստուածաշնչում եղել են նաեւ բնագրի հետ կապուած դժուարութիւններ, այդ մասին խօսում է հրատարակիչը ոչ միայն գործի Առաջաբանում, այլեւ վերջում «Առ լեթերցողսդ»ում: «Աստուծոյ ողորմութեամբ» է կարգաւորում Աստուածաշունչը Դաղմատացու գլխագրութեամբ, տնատուութեամբ, ինչպէս նաեւ ցանկերով ու Աւետարանի համաձայնութեամբ: Ոսկան Երեւանցին այստեղ վիճելի մասերում մեր շարադրանքն է անխախտ պահել, իսկ գլխատուութիւնը ու տնատուութիւնը ըստ Դաղմատացու է կատարել, ինչպէս «որպէս ահա տեսանես ի գիրս Եսթերայ, Եզրասայ, Սաղօմօնի, Դանիէղի եւ այլոց»:¹⁹ Քանի որ Մակաբրայեցւոց Երրորդ գլուխը չկայ լատինականում, արծարծուել է ցանկում, տեքստը առանց գլխահամարի է, սակայն ըստ ցանկի տնատուել է եւ առանց գլխի ու առանց համարի տպա-

18 Հայ գիրքը, 45:

19 Հայ գիրքը, 49:

գրուել: Այս եւ նման այլ դժուարութիւններ (մէկ առ մէկ թուարկում է) յաղթահարուել են, մինչեւ որ Ստեփաննոսի, Թէոդորոսի ու Պետրոս Ջուղայեցու օժանդակութեամբ սեղանին է դրուել հայերէն առաջին տպագիր Աստուածաշունչը, օգտագործելով Աւետիսի բոլորդիրը ու Մաթէոսի «յոյժ խոշոր ... եւ անյարմարք» ստեղծած գրերը, իսկ «վասն համաճայնութեան եւ խորագրութեան» Ոսկան Երեւանցու պատուիրած նօտրդիրը²⁰:

Վեց այլ հրատարակութիւններ էլ է արել Ոսկան Երեւանցին Ամստերդամում՝ Ժամագիրք, Մաշտոց, Աղօթագիրք, «Վարդապետութիւն քրիստոնէական» (1667), Նոր Կտակարան, Տոմար, Մովսէս Խորենացու «Աշխարհացոյց» եւ Վարդան Այգեկցու «Աղուէսագիրք» (1689):

Մովսէս Խորենացու եւ Վարդան Այգեկցու այս նշանաւոր գործերը հրատարակուած են հետեւեալ խորագրով. «Գիրք աշխարհաց եւ Առասպելարանութեանց որ է Աղուէսագիրք» ունի 312 էջ: Առաջին գործը զբաղեցնում է 1-88, որ համապատասխանաբար ունի ա-զ պրակակալումը 8ական թերթով, բացառութեամբ զ պրակի՝ ճ թերթ: Հայկական պրականիշի կողքին փակագծերում համապատասխան արաբական թուանշաններն են: Թերթերին արաբական թուանշաններն են աճողական հերթականութեամբ ձեռագրերի այսօրուայ համարակալման նման (Յար, Գար, Գալ, Եւ այլն):

Երկրորդ գիրքը սկսում է նոր թերթով եւ ունի նոր պրակակալում նոյն սկզբունքով՝ ա-ծն իւրաքանչիւր պրակը 8 թերթ, միայն ժերդը՝ 4: Այստեղ, ինչպէս տեսնում ենք, պահպանուել է երկու ձեռագրիր ի մի տփի կազմման սկզբունքը, որ կիրառելի է եղել մեզ հասած ձեռագրերի մատեաններից շատերում:

Երկու գործերն էլ չունեն գլխաքաժանման ժամանակ գըլիստերի աւանդոյթ, գլուխները առանց զարդագրերի են եւ սկսում են երկաթագրով:

Մաշտոցի անուան Մատենադարանում պահուող այս գրքի չորս օրինակներից մէկում՝ N 1878 կազմելիս ձեռագրերի նման ամրացուել է ձեռագրիր պատառիկ ժիշտի ընդօրինակութեամբ, որ կարդացում է յետեւառաջութեամբ՝ Ար-Ա. Գիրը բոլորդիրն է, բաւականին եղծուած, հաւանաբար՝ ինչ-որ առակի մաս. «Տեսաք զարի մշակ նահատակն ըզկորով[վամիտ] // [դաս]տիա-

րակն ի վեր կառկառեալ յաղաւթսն //»: Գրքի կազմը շատ նման է ԺՀ դարի ձեռագրերի բնորոշ կազմին՝ աստառը նոյն դարի պտաւոր կարմիր կտաւ է, միջուկը տախտակ:

Այստեղ՝ Ս. Էջմիածնի եւ Ս. Մարգսի տպարանում են հրատարակուել նաեւ դեռ Առաքել Դաւրիժեցու կենդանութեան օրոք տպուած նրա «Գիրք պատմութեանցը», Շարակնոցը եւ երկու Տօնացոյց (1669):

Այս գործերից մի քանիսը նմոյշների տպագրական տարբերութիւններ ունեն, (հակառակ միեւնոյն տարեթուին հրատարակուած լինելուն) միեւնոյն բովանդակութեան եւ խմբագրութեան այս գործերը շարուածքային եւ պատկերային տարբեր նկարագրում ունեն:

Այսպէս. Մատենադարանում պահուող 1669ի «Տօնացոյց տէրունական տօնից» մի քանի օրինակ կայ: Նրանցից մէկը տարբերուում է միւսներից: Ա. պրակի սկզբում «Աւուրք ցուցանելոյ տօնս սրբուիոյ Աստուածածնի» է, որի մէջ մտնում են 5 աղօթքներ ըստ օրերի: Տարբեր է նաեւ նկարագրումը. գործի սկզբի կիսախորանի փոխարէն ճակատազարդ է, զարդագրերը տարբեր են, բացակայում է խաչելութեան պատկերը, Զատիկի տօնի պատկերագրութիւնը բացակայում է ու կիսախորանի փոխարէն, ճակատազարդ է Յարութեան պատկերով, տարբեր է նաեւ լուսանցազարդը: Բացակայում է նաեւ Ոսկան Երեւանցու յիշատակարանը: Այս օրինակի շատ այլ տարբերութիւններ էլ կան, որն էլ ենթագրել է տալիս, որ գործի տպագրութեան երկու շարուածք է եղել²¹:

Երկու շարուածք է օգտագործուել, հաւանաբար, նաեւ Ոսկանեան հրատարակութեան մէկ այլ տոմարական բնոյթի աշխատութեան միեւնոյն թուականի՝ 1668ի նմոյշների համար: Մաշտոցի անուան Մատենադարանի հնատիպ Փոնդի 31, 32 համարի Գիրք Տոմարացի բովանդակութիւնը նոյնն է, բնագրերը եւս, սակայն տարբեր է թուղթը, շարուածքը, թիւ 32ում գրքի առաջին երեք, ինչպէս նաեւ վերջին երեք նիւթերի տողաբաժանումը 21 է, իսկ Պարզատոմարինը՝ 19: Երկու օրինակների չափսերը եւս նոյնն են: Գրչագիր բոլորգրի նոյն տառաձեւով են գրուած հրատարակութեան բոլոր նիւթերը, միայն կարծես աննշան տողերի տարածութիւնն է այլ: Պարզութիւն է մտցնում

21 Մաշտոցի անուան Մատենադարան հնատիպ Փոնդ, 60, 61:

տպագրութեան յիշատակարանը՝ էջ 223ում. «Ժտեմք յընթերցողացդ անմեղադրելի առնել զմեզ ի սխալանացն, զի ոչ ի բազմաց օրինակաց սոռուգեցաք, վասն զի ոչ գտանեին աստ այլ ի միոյ օրինակէ, որ ինչ գրեալ էր փոխադրեցաք աստ, որպէս եւ խնդրեալ եղիւ յումանց»:²²

Յիշատակարանը վերաբերում է ոչ թէ Պարզատումարին, այլ Հայոց եւ Հռոմայեցւոց Տոմարների, Հայոց մէջ շատ ընդունուած ու սիրելի Ցովասափի Տաղի, Մարմնախաղացի ու Երազահանի ընդօրինակութիւններին, որոնց կցումը 19 տողանոց Պարզատումարի շարուածքին, գործի սկզբնական տարբերակում տողային նման տարբերութիւններով է տուել: Այս տարբեր տողային բաժանումները հանդիպում են նաեւ ձեռագրական ընդօրինակութիւններում, եւ դա կապուած է ժողովածուներում ամփոփուած նիւթերի նախագաղափար օրինակի տողման թուից, որն ընդօրինակելու ժամանակ գրիչը խախտելու իրաւունք չունի:

Վաղ ամստեղդամեան հրատարակութիւններում որոշակիօրէն պահպանուել են հայերէն ձեռագրերից եկող այլ սկզբունքներ եւս: Ձեռագրերի նման գիրքը բաժանում է պրակների, որի թերթաքանակը հաստատուն է՝ 8ական թերթ, պրականիշերը դրւում են պրակի առաջին եւ վերջին էջերի ստորին լուսանցքներում: Հնատիպում տարբերութիւնը միայն հայկական պրականիշի կողքին դրան համարժէք արաբական թուանշանների առկայութիւնն է եւ, բացի դրանից, ամբողջ գիրքն ունի արաբաթիւ էջակալում: Տպագրական գործի զարգացման հետ հրատարակուող բնագիրը ստանում է յստակ բառանջատում ուր կիրարական են դառնում հայերէնի կէտադրութեան հիմնական նշանները:

Ամստեղդամում Ոսկանեան տպարանը գործում է մինչեւ 1669 ընթերցողի սեղանին դնելով 19 հրատարակութիւն:

Գրահրատարակչութեան գործը շարունակում է մինչեւ դարի 80ական թուականները: Մարսելում Ոսկան Երեւանցու տպարանում Կարապէտ Աղբիանացու մօտ գրաշարութիւն ու տպագրական գործ ուսանած աշակերտի՝ Մատթէոս Վանանդեցու 1685ին նորաբաց Գողթնի Սբ. Խաչ եւ Մարիամ Աստուածածին

22 Մաշտոցի անուան Մատենադարան հնատիպ Փոնդ, 31, 32: Հմմտ. Հայ գիրքը, 54:

տպարանն Ամստերդամում իր գործունէութիւնն է շարունակում մինչեւ 1717 թուականը:

Այս տարիների հրատարակութիւնները գնալով աւելի են մօտենում եւրոպական գրատպութեանը եւ աւելի ու աւելի են հեռանում ձեռագրական գրքարուեստի նմոլցներից: Վանանդեցիների բարձրարուեստ հրատարակութիւնները տպագրուած են 5 տառատեսակներով: 1702ին լոյս տեսած «Ասկեայ դուռն դպրատան» հրատարակութեան սկզբում զետեղուած հայոց այբուբենը գրուած է այս 5 տառատեսակներով, որոնք հրատարակիչն անուանում է «փորագրի տեսակն»:

Ձեռագրային աւանդների մի իւրօրինակ շարունակութիւն է նաեւ հրատարակուած գրքի կազմումը (դրոշմազարդ կաշի) գրքի լուսանցակողերի գունաւորումը, յատկապէս թերթերին գարմիր ու ոսկեղեղին գոյն հաղորդելը: Տպագիր գիրքը, յատկապէս Սուրբ Գիրքը ձեռագրին հաւասարուելու եւ ձեռագիր մատեանի նման հայ ընթերցողի ընտանիք մտնելու մտահոգութեամբ կրկնակազմուում էր, մետաղազարդ էր դառնում: Սա մի տեսակ տպագիր գիրքը ձեռագրայնացնելու փորձ էր:

Տպագիր գրքին հայ ընթերցողը վերաբերուում է ձեռագրի նման. կազմաստառին եւ գրից ազատ էջերին քիչ չեն ձեռագրերում հանդիպող ուշ շրջանի յիշատակարանները, նոյնաբնոյթ գրչափորձերը, ինչպէս եւ տոմարական բնոյթի նշումները: Մաշտոցի անուան Մատենադարանի հնատիպ . Փոնդում պահուող ներաչս Շնորհալու «Յիսուս Որդի» գրքերից մէկում (N 2331) Փորզացում (պահպանակ) կայ ԺՀ. դարի նօտրգրով գրուած յիշատակարան. «Յիշատակ է գիրքս, որ կոչի Յիսուս Որդի Պետրոսի որդի Սրապեօնին եղանք Պողոսի որդի՝ Ըստեփանին»: Այս յիշատակարանի առաջին 7 բառը այլ գրութեամբ կրկնւում է գրչատակարանի առաջին 7 բառը այլ գրութեամբ կրկնւում է գրչատորձի ձեւով գրքի Ա. փեղկի կազմաստառին: Ազատ էջ նում. փորձի ձեւով գրքի Ա. փեղկի կազմաստառին: Ազատ էջ նում. «Յիշատակ է Գիրքս որ կոչի Յիսուս Որդի՝ տէր Աւետիսին եւ իւր որդի Մարգարին, միւս որդի Օվսեփին, Սրեակին»: Նոյն ձեռքով նոյն յիշատակարանն է կրկնւում «միւս որդի Օվսեփին» փոխարէն «միւս Գօչօյին» անուան յիշատակութեամբ²³:

Ականատեսի եւ մասնակցի թողած տպագիր յիշատակարանները եւս պարունակում են ժամանակի պատմական անցուդարձերին նուիրուած արժէքաւոր տեղեկութիւններ, եւ դրանով

23 Մաշտոցի անուան Մատենադարան, հմատիպ ֆոնդ, 2331:

էլ այս յիշատակարանները եւս դառնում են անգնահատելի պատմական աղբիւր ոչ միայն առանձին տպարանի գործունէութեան, այլեւ տուեալ երկրներում հայ համայնքի պատմութեան շարադրման համար:

Հայալեզու հրատարակութիւններով շատ պատմական, հոգեւոր, թարգմանական եւ ինքնուրոյն գործեր տպագրուելով, մէկընդմիշտ փրկուեցին կորստեան վտանգից: Միաժամանակ գրչի ծանր աշխատանքը փոխարինուեց մեքենայի անհամեմատ հեշտ ու արագ աշխատանքով:

Չնայած այդ ամէնին՝ տպագիր գիրքը երկար ժամանակ կողք կողքի գոյատեւում էր ձեռագիր մատեանների ընդօրինակման հետ:

ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

Summary

**THE CONTINUITY OF THE TRADITIONS
OF ARMENIAN MANUSCRIPTS
IN EARLY PUBLICATIONS IN AMSTERDAM**

ARPENIK GHAZAROSYAN

After Gutenberg's discovery of book printing in the 1440s, printing houses were established alongside manuscript copying centers in Armenian communities all over the world. Printed books appeared next to classical manuscripts. Five books were published using 24 frontal ornaments in 1512-1513.

Already from the 1520s, prototypes of title pages began to be used in printed Armenian books. The first printed Armenian books resembled manuscripts as far as possible. The illustrations were black and white with different ornaments for capital letters and floral ornaments for margins. The *bolorgir* script was used without accurate word separation. The punctuation was also archaic, using only colons and full stops. Reading and declamation signs similar to the markings in manuscripts were used. These principles of copying and illustration that come from the manuscript tradition are seen in printed Armenian books until the 16th-17th centuries.

Just like Armenian manuscripts, the printed Armenian books also differed from the book traditions of other peoples with their colophons. Indeed, the principles behind colophon writing are the same both in the manuscript and in the printed book traditions.

Starting from the 17th century, the printed book colophons, like those of manuscripts, became longer and contained more detailed information. The subject matter of printed books was the reason for corresponding developments in art and technology. The manuscript approach was more notable mainly in printed books of a ceremonial nature. The reason for this was the long-established tradition of ornamentation of ceremonial texts.

The early period of Armenian printing in Amsterdam was led by Voskan Yerevantsi. The texts of these publications include questions in dark black italic scripts that corresponds to the red letters originally used in manuscripts.

Voskan Yerevantsi commissioned the first accurate signs for Armenian musical notation (*khaz*), which were created for printing *sharakans* – Armenian liturgical hymns.

The continuation of manuscript-copying traditions are seen in the early publications of Amsterdam. The book is divided into folios with eight pages on each sheet. The only difference is that in printed books Arabic numerals are used alongside Armenian numerals for the folios, while Arabic numerals are used on the pages in the book.

As book printing developed, texts began to feature accurate word separation and punctuation marks that began to resemble modern Armenian usage over time.

Another evidence of the manuscript tradition preserved in early book printing is the binding (leather with ornamentation) and the red or golden yellow colouring of book edges. Printed books, especially Bibles, were covered with special double binding, including metal ornaments in order to make them look like traditional manuscripts.

A lot of historical and religious, translated and original works were preserved by being published in early Armenian printing houses. Meanwhile, the difficult work of copying out written text was replaced with the faster and easier machinery.

Nevertheless, the manuscript tradition survived parallel to printing technology for a long period.